





Սոցիալական ձեռներեցություն. Համագործակցային մկաններ և գաղափարներ Երիտասարդական և Երիտասարդության համար աշխատող ՔՀԿ-ների կարողությունների զարգացման եռօրյա դասընթացի գնահատման հարցաշար Սեպտեմբերի 3-5, 2019

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը շնորհակալություն է հայտնում Սեպտեմբերի 3-ից 5-ը տեղի ունեցած դասընթացին մասնակցելու համար: Խնդրում ենք 20 րոպե ժամանակ հատկացնել գնահատման հարցաթերթիկը լրացնելու համար:



1 Համընկա՞ն արդյոք դասընթացից ձեր սպասելիքները արդյունքների հետ:



2 Ստացաք արդյո՞ք բավարար գիտելիքներ և/կամ գործիքներ, որոնք կօգնեն Ձեր աշխատանքային պարտականությունները ավելի արդյունավետ կատարել:



3 Արդյո՞ք դասընթացին ներկայացված թեմաները՝



Դասընթացը անցկացնելու մեթոդներն ու գործիքները

5 Ի՞նչ հավելյալ նկատառումներ ունեք շփումների հետ կապված, ի՞նչ դասեր քաղեցիք:

Նյութեր, որոնք կարող եմ օգտագործել իմ թրեյնինգների ժամանակ

Դասընթացը շատ արդյունավետ էր, կազմակերպված շատ լավ, որից բավականին տեղեկատվություն, հմտություններ ու գիտելիքներ քաղեցի:

Անընդհատ լինել տեղեկացված և զարգացնել ստեղծագործական մտածելակերպը: ամեն նոր գաղափար անհրաժեշտ է ֆիքսել և քայլեր ձեռնարկել, այսպես այն կմնա միայն գաղափար: Դասընթացը շատ ակտիվացնող էր:

Նմանատիպ դասընթացները չափազանց կարևոր են այլ կազմակերպությունների հետ ծանոթանալու, նրանց հետ շփվելու տեսանկյունից:

Հավելյալ նկատառումներ չունեմ

Առանձնապես նկատառում չունեմ, բայց ևս մեկ անգամ համոզվեցի, որ հայ հասարակությունը զուրկ է գաղափար զարգացնելու և դրա շուրջ համախմբվելու ու գործելու կարողությունից: Թեկուզ այս 25 հոգանոց խմբում դա նույնպես արտահայտվեց:

Ինդիդը ճիշտ էր գնահատված, լուծումները ընդունելի էին, օպտիմալ: Մատուցման ոճը չէր հոգնեցնում, կար ուշադիր լինելու մոտիվացիա

Չունեմ

-

Դասընթացի ժամանակ համապատասխան պայմաններ ստեղծվեցին, որպեսզի դասընթացի բոլոր մասնակիցները հաղորդակցվեն միմյանց հետ, թիմային աշխատանքները իրականացնեն միասին, որը, կարծում եմ մարտահրավեր էր բոլորիս համար, և դա օգնեց մեզ հասկանալ դիմացինին և միասին աշխատել ընդհանուր գաղափարի շուրջ

Հետաքրքիր նոր ծանոթություններ ձեռք բերեցի

Ծանոթացում նոր ու հետաքրքիր մարզային ՀՎ-ների հետ: Համագործակցության նախադրյալներ

Ամեն ինչ սպասվածից ավելին էր

ասելիքներում լինել հնարավորինս կարճ, բայց բովանդակալից

Ենթադրում էի, որ կաշխատենք մեր անհատական պրոյեկտների զարգացման վրա, բայց ստացվեց քիչ այլ փորձառություն, որ տեսակով շատ տպավորիչ էր: Լավագույնը դասընթացավարների պատրաստականությունն էր կիսվել փորձով ու գիտելիքներով: Առանձնակի գովելի է հետագա խորհրդատվություն տալու իրենց առաջարկը: Մի շաբաթից կոնտակտի դուրս կգամ, տեսնեմ՝ որանքով են հետևողական :Ճ

Պետք է օգտագործել ցանկացած հնարավորություն, նույնիսկ այն հնարավորությունը, որ ենթդրում ենք, որ ոչ մի օգուտ չի կարող տալ

Հիմնավորված գաղափարներ ներկայացնելն ու իրականացնելու ճանապարհներ գտնելը

Նոր խաղեր, ծանոթացման և թեմայի ամփոփման նոր մեթոդներ սովորեցի



Շատ անմիջական շփում էր, որը ավելի տվեց նոր փորձ և գաղափարներ

Կփորձենք համագործակցել այլ ՀՎ-ների հետ:

Շատ օգտակար էր, ոչ միայն դասընթացը, այլև նեթվորքը:

Չփումների հետ կապված հավելյալ նկատառումներ չունեմ

6 Ձևավորվեցի՞ն արդյոք կապեր, որոնք կարող եք օգտագործել հետագայում՝ նոր ծրագրերի մշակման, նոր գաղափարների իրականացման նպատակով և այլն:





Իմ համագործակցության շրջանակը կայացավ և համալրվեց այլ հետաքրքիր գաղափարներ ունեցող մարդկանցով: Կոնկրետ մտածում եմ ուսուցողական այց ունենալ այդ կազմակերպություններ:



Մասնավորապես ծանոթացա Իմփաքթ Հաբ կազմակերպության գործունեության մասին և ֆոնդիայթաթման գործիք կարելի է օգտագործել այս կազմակերպության ընձեռած հնարավորությունները

Կան մի քանի կազմակերպություններ, որոնց հետ իրենց համայնքում կարելի է համագործակցել և համատեղ ծրագրեր իրականացնել

7 Կցանկանա՞ք արդյոք մասնակցել ԵՀՀ-ի կողմից կազմակերպված նման այլ միջոցառման:





8 Ինչպե՞ս եք պատրաստվում տարածել ինֆորմացիան այս միջոցառման մասին ձեր մասնագիտական շրջանակում:



Բոլորը միասին

9 Պատրաստվում ե՞ք արդյոք կիսվել ստացված գիտելիքներով, գործիքներով ձեր գործընկերների հետ:



Աշխատում եմ երիտասարդների հետ և ոչ ֆորմալ կրթության միջոցով կփոխանցեմ ստացած գիտելիքներս

Տեղեկատվական դասընթաց եմ կազմակերպելիմ աշխատակիցների հետ և փոխանցել եմ նյութը և կիրառվող տեխնիկաները:

Պատրաստվում եմ գործընկերներիս համար կազմակերպել դասընթաց սոցիալական ձեռնարկատիրության թեմայով

Կազմակերպված միջոցառումներիս

Գործընկերներիս հետ հանդիպման ընթացքում կփորձեմ հակիրճ ներկայացնել դասընթացը և դրա մեթոդաբանությունը, կփորձեմ պրեզենտացիա պատրաստելիմ ստացած գիտելիքների և առկա նյութի հիման վրա և ներկայացնել:

Նյութեր, օրինակներ, նկարներ, հետագա շփումներ , հանդիպումներ մասնակիցների հետ

Կազմակերպելով workshop իմ գործընկերների և երիտասարդների հետ, կիրառելով իմ ստացած գիտելիքն ու գործիքակազմը մեր սպասվելիք ծրագրերի ընթացքում:

գործողությունների միջոցով

հաջորդ շաբաթ արդեն թիմին պատրաստվում եմ համառոտ պատմելով անդակությունը՝ ընդգծելով ավագույն գործիքակազմը

Մեր ՀԿ-ի կողմից իրականացվող դասընթանցներում օգտագործել դասընթացի անցակացման մեթոդները, կիսվել ստացած ինֆոյով ՀԿ անդամների և կամավորների հետ

Կցանկանամ նմանատիպ սեմինար կազմակերպել հենց մեր համայնքում:

Նույն դասընթացը կազմակերպելով՝ ՀՀ մարզերում:

10 Միջոցառման ո՞ր պահն էր որ առանձնակի հիշվեց:

Բիզնես պլանի մշակումը

Ամեն հատվածն էլ հիշվող էր և յուրահատուկ, հատկապես թրեյնինգի անցկացման մեթոդները

Բաղերի վարժությունը: գաղափարների գեներացիան: փիչինգը:

Ինտերակտիվ միջոցների տարատեսակ օգտագործումը

Երևի բոլորը

Միջոցառումը ամբողջությամբ հիշելի է, քանզի դասավանդման մեթոդաբանությունը նոր էր, իսկ դասընթացավարները շատ հետաքրքիր էին ներկայացնում:

Ավարտի և ամփոփման պահը, հասկացա, որ շատ բան ավելացրի իմ մտավոր պաշարներին

Բոլոր օրինակները և թիմային աշխատանքները շատ հիշվող էին

-

Տպավորիչ էին խաղերը: Դասընթացը սկսեցինք կառուցելով բաղերը անհատապես, իսկ վերջում դա արեցինք ամբողջ թիմով: Մեր Փիչները ներկայացնելը և նկատողություններն ու խորհուրդները ստանալը շատ կարևոր և օգտակար էր:

Բաղիկների պատրաստումը, հոգեբանական հնարքների կիրառումը

Գաղափարների գեներացիա, փիչինգ,

Բաղիկի պատրաստումը, փիչինգի հատվածը, ծանոթացման փուլը, գաղափարից դեպի նպատակն քայլերի մշակումը և գործնականը:

Ինքս իմ մեջ խաղերի միջոցով հետաքրքիր բացահայտումներ անելը և փիչինգի ֆիդբեքները:

Կրեատիվությունը, ինտերակտիվ խաղային մեթոդիկան

Դժվար է հստակ ասել, հիշվեց ընդհանուր, երեք արդյունավետ օր, կիրառելի գիտելիքներով, տեղակատվությամբ և գործիքներով, ինչն ամենակարևորն է

Ե՛ւ՛՛ հնարավորությունների ներկայացնելը

Բաղիկը :)

Յուրաքանչյուր պահ, հիշվողներից մեկը ծրագրերի ներկայացումը մրցավարներին

Հենց ամենա սկիզբը /բաղիկների հավաքումը լեզուներով /

Փիչինգը

չեմ առանձնացրել, ամբողջ ընթացքն էլ հետաքրքիր էր ու հիշվող

11 Լշեք 1-2 ուսուցման կարիքներ/բացեր, որ դուք կամ ձեր կազմակերպությունը ունի:

Սձ հի օրենսդրություն

Միգուցե ծրագրերի և կազմակերպության կառավարման: Կարիքները շատ են `ֆոնդայթայթման, ռեսուրսների կառավարման և այլն:

Ֆոնդայթայթման եղանակները:

Ֆինանսական միջոցների ներգրավում

չկա

Ֆոնդայթայթում և networking

Ֆոնդայթայթման հմտություններ,

Ֆոնդայթայթում

-

Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղորդման փորձի գործնական օրինակներ այլ երկրներից:

Ֆանդրայթինգ, բյուջեի հայթայթում

Ֆոնդայթայթում: ոչ ֆորմալ կրթական մոդուլների կազմման հմտություններ:

Մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարում, ֆինանսական անկայունություն

Ֆոնդայթայթում

իկ սոց. ձեռներեցությամբ զբաղվելու հարկային կարգավորումները :Ճ

Ֆինանսահայթայթում, միջազգային համագործակցություն

Ինչպես գաղափարը կամ ծրագիրը արդյունավետ ներկայացնել դոնորին և ինչպես գաղափարները դարձնել մրցունակ

Նոր ու առավել հետաքրքիր նյութերի, ռեսուրսների պակաս

Ֆոնդայթայթման դասընթացներ

1.Ես ինքս հենց անգլերեն լեզուն կցանկանայի սովորել,իսկ ԹՀԿ-ն շատ բացեր ունի:

—

ՍՁ

12 Խնդրում ենք նշել ցանկացած նկատառում կամ կարծիք այս դասընթացի մասին, որը վերը չի քննարկվել և կօգնի նմանատիպ դասընթացները հետագայում էլ ավելի արդյունավետ դարձնել:

Ինձ թվում է կարելի է դասընթացի ընթացքում կոնկրետ 1 կամ 2 համագործակից կառույցներով, կոնկրետ գաղափար մշակել և այն ծրագիր դարձնել:

Հատկապես եվրոպացի փորձագետների ներգրավումը դասընթացների մեջ չափազանց կարևոր են, առանձնահատուկ և տպավորիչ է ներկայացման ոճն ու ուսուցման մեթոդները, որոնք ինչ խոսք, էլ ավելի արդյունավետ են դարձնում դասընթացները:

Ամեն ինչ լավ էր

Դասընթացը, իհարկե, շատ հետաքրքիր ու նոր էր, սակայն, երբ խոսքը գնում է դասընթացի կիրառելիության և արդյունավետության մասին, ես կարող եմ այն գնահատել գնահատման 10 սանդղակից 5: Այս դասընթացը ավելի շատ մոտիվացիոն դասընթաց էր, իսկ դասընթացավարները մոտիվատորներ էին: Շատ ավելի արդյունավետ կլինեի դասընթացը, եթե դասընթացի ընթացքում ուսուցանվեի սոցիալական ձեռներեցության առաքելության, ազդեցության, գործիքակազմի, տեսակների, ռեսուրսների գնահատման, ՀՀ-ում սոց. ձեռներեցության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ նյութեր, քանի որ կային մասնակիցներ, որոնք գաղափար չունեին սոցիալական ձեռներեցության մասին: Շատ ավելի օգտակար էր և կիրառելի Թամարա Թորոսյանի և Փիրուզա Մանուկյանի դասընթացի ժամանակ հատկացված խոսքերը: Բայց ընդհանուր առմամբ միջոցառումը հաջված էր: Ես ինքս դասընթացավար եմ և հասկանում եմ, թե որքան դժվար է գրավել ներկաների ուշադրությունը և հետաքրքրություն առաջացնել: Իհարկե, սա իմ սուբյեկտիվ կարծիքն է և խնդրում եմ այն չկապել դասընթացի կազմակերպչական մասի հետ, խոսքս վերաբերում է դասընթացի ոճի մասին: Եվ այս ամենը թող ընկալվի նաև որպես քննադատություն և այն թող Ձեզ օգնի նմանատիպ դասընթացները հետագայում էլ ավելի արդյունավետ դարձնել համար: Շնորհակալություն ուշադրության համար: Հարգանքով՝ Մարիամ Երեմյան:

Շատ ճիշտ ու հարմար էր դասընթացի վայրի ընտրությունը, մասնակիցների քանակը և ժամերը: Հուսով եմ, որ էլ կմասնակցեմ ձեր կողմից կազմակերպված նույնքան օգտակար և րավիչ դասընթացի:

Շնորհակալվեմ օգտակար ինֆորմացիա փոխանցման համար: Հաջողություններ: Սիրով՝ Նարինե Թեքնեշյան

Թող նման դասընթացներ շատ լինեն, որակարգը արդյունավետ էր կազմված, շնորհակալվեմ:

Ինչպես տարբերակվածություն եմ զգում, քանի որ ստացածս գերազանցեց սպասելիքներս, եվ ես անպայման կմասնակցեմ ձեր կողմից կազմակերպված տարբեր սեմինարների:

հայաստանյան հնարավորությունների ներկայացման հատվածը շատ արհեստակերպով ձգձգվեց ու ավելի հոգնացրեց: Մյուս երկու հրավիրյալ հյուրերը նույնպես ըստ բովանդակության շատ բան չասեցին, և իրականում չհնտեգրվեցին դասընթացի տրամաբանության մեջ

Միակ բանը, որից գրեթե նոր բան կամ կիրառելի տեղեկություն չստացանք, այսինքն մի բան, որ կհիշվեր և հետագայում կօգտագործվեր, դա դասընթացիցի դուրս երկու հյուրերի հետ հանդիպումն էր: Կա երիտ քաղաքականություն, կա վերլուծություն, բայց թե որտեղ և ինչպես է դա կիրառվելու, կամ որքանով է օգտակար, դա հստակ չէ: Երկուսն էլ շատ ընդհանրական են:

Մի ծրագիր ընտրել և հնարավորինս օգնել վերջնական արդյունքին հասնել

Ես ինքս շատ տպավորված եմ սեմինարից, սկսած կազմակերպման աշխատանքներից, վերջացած սեմինարի մատուցման ձևից: